ջերտ-շերտ իրար հաջորդում են ծածկող և շարահերկ մշակաբույսերը:

- *Արդյունավետ ոռոգում.* Այն օգնում է նվազեցնել հողի վրա տարբեր բացասական ազդեցությունները, մասնավորապես՝ հողերի էրոզիան և երկրորդային աղակալումը, օրինակ՝ կաթիլային, անձրևացման, մանրակաթիլային և այլն:
- *Օրգանական պարարտանյութերի կիրառություն.* Այս պարարտանյութերը բացառիկ դերակատարություն ունեն հողը օրգանական նյութերով հարստացնելու գործում, որի շնորհիվ հողային միջավայրը միաժամանակ հարստանում է մակրո և միկրո սննդատարրերով, բարելավվում է դրանց ֆիզիկամեխանիկական կառուցվածքը, բարձրանում է կենսաբանական ակտիվությունն ու բերրիությունը:
- *Բույսերի համապարփակ պաշտպանության մեթոդների ներդրում.* Այն թույլ է տալիս խուսափել շրջակա միջավայրն աղտոտող քիմիական նյութերի օգտագործումից:
- *Ծածկող մշակաբույսերի աճեցում.* Կենդանի ցանքածածկը պաշտպանում է հողը ոչնչացումից, բարելավվում է դրա կառուցվածքը, մեծացնում է սննդանյութերի պարունակությունը և հանդիսանում է մոլախոտերի դեմ պայքարի արդյունավետ միջոց:
- *Դարավանդային հողագործության զարգացում.* Մշակաբույսերի աճեցման դարավանդային մեթոդը հնարավորություն է տալիս ագրոլանդշաֆտի արմատական բարելավման միջոցով ընդլայնել արդյունավետ օգտագործվող հողատարածքները, նվազեցնել ջրային էրոզիան, խթանել հողառաջացման ու դրանցում ածխածնային նյութերի կուտակման գործընթացները:
- *Բնական հողաբարելավիչների օգտագործում.* Բարձր ծակոտկենություն ունեցող հանքանյութերը (հրաբխային խարամ, պեռլիտ, դացիտային տուֆ և այլն) բերրի հողերին ներմուծելու միջոցով հողի վիճակի բարելավման և դրանում խոնավության պաշարների ավելացման ագրոտեխնիկական արդյունավետ միջոցառում է:

Հողը, ի տարբերություն շատ այլ բնական պաշարների, ճիշտ օգտագործելու դեպքում ոչ միայն չի սպառվում, այլ ընդհակառակը՝ անընդհատ բարելավվում է և բարձրանում է դրա բերրիությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ.

«Ցածր ածխածնային լուծումների ներդրում Գեղարքունիքի մարզի Ծովակ բնակավայրում՝ հողային և ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար»

Տեղեկատվական թերթիկը մշակվել է «Ցածր ածխածնային լուծումների ներդրում Գեղարքունիքի մարզի Ծովակ բնակավայրում՝ հողային և ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսավորմամբ: Սույն տեղեկատվական թերթիկում արտահայտված մտքերը պատկանում են «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ին, և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԶԾ տեսակետը:

Ծրագիրն իրականացվում է «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ կողմից՝ Հայաստանում ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսավորմամբ:

www.blejanngo.org

ԲԼԵՋԱՆ gef SGP The GEF Small Grants Programme UNDP

ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԱԾԽԱԾՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄ

Հողը երկրակեղևի բերրիությամբ օժտված մակերեսային փուխր շերտն է, որն հազարամյակների ընթացքում գոյացել է լեռնային ապարներից՝ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական գործոնների երկարատև ազդեցության հետևանքով:

Չափազանց մեծ է հողի դերը մարդկության համար, քանի որ, մարդը հողից է ստանում այն ամենը, ինչը անհրաժեշտ է իրեն լիարժեք կյանքի համար: Սննդի միջոցով մարդու ստացած էներգիայի մոտավորապես 88%-ը տալիս են մշակվող հողերը, 10%-ը ստացվում է անտառներից ու բնական կերահանդակներից և միայն 2%-ն է ստացվում Համաշխարհային օվկիանոսից: Բնական պայմաններում 1սմ հաստությամբ բերրի հողաշերտը ձևավորվում է մոտավորապես 125-150 տարվա ընթացքում:

Այսօր աշխարհի գրեթե բոլոր երկրներում, անկախ աշխարհագրական դիրքերից և տնտեսական զարգացման մակարդակից, առկա են հողերի դեգրադացիայի տարբեր դրսևորումներ, որոնք նվազեցնում են հողի բերքատվությունը և էապես ավելացնում պարենային ապահովության ոլորտի հիմնախնդիրները:

Հողերի դեգրադացիան մի գործընթաց է, որը հանգեցնում է հողերի քանակական ու որակական հատկությունների վատացման, բերրիության անկման կամ լրիվ կորստի:

Դեգրադացիան ներառում է հողի բերրիության նվազումը, հողի էրոզիան, աղտոտումը, բնական կերահանդակների կենսաբանական բերքատվության նվազումը, ոռոգվող տարածքների աղակալումը և ճահճացումը, հողերի օտարումը բնակարանաշինության,արդյունաբերության և ճանապարհաշինության նպատակով և այլն:

Անապատացումը բերրի հողաշերտի դեգրադացիայի ծայրահեղ ձևն է, երբ հողի բերրիությունը խիստ ցածր է կամ լրիվ բացակայում է:

Հաշվի առնելով մեր երկրի աշխարհագրական դիրքը, տարածքի արտահայտված ուղղաձիգ գոտիականությունը, լեռնային ռելիեֆի կտրտվածությունը, սակավահողությունը և հողի ոչ բավարար խոնավությունը, Հայաստանը դասում են երկրագործության տեսանկյունից ծայրահեղ ռիսկային երկրների շարքին:

Հայաստանում վարվող անհերթափոխ ու չհամակարգված երկրագործության պայմաններում, նկատվում է հողի հյուծվածություն և սննդատարրերով աղքատացում, ինչպես նաև, հումուսի պաշարների կրճատում (վերջին 20-30 տարիների ընթացքում՝ շուրջ 1%-ով):

Ընդ որում, Հայաստանի հողերի ավելի քան 80%-ը բնութագրվում է հողերի դեգրադացիայի տարբեր դրսևորումներով և անապատացման հատկանիշներով, ինչը անհետաձգելի է դարձնում հողային ռեսուրսների պարբերական մոնիտորինգն ու գյուղատնտեսական հողերի վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Հողերի դեգրադացիայի չեզոքությունը կամ չեզոք հաշվեկշիռը մի վիճակ է, երբ երկրի հողային ռեսուրսների որակը և քանակը, որոնք անհրաժեշտ են էկոհամակարգային գործառույթների և ծառայությունների ապահովման և պարենային ապահովության բարձր մակարդակի պահպանման համար, մնում են անփոփոխ կամ բարելավվում են՝ ըստ կոնկրետ սահմանված ժամանակային և տարածական մասշտաբների ու էկոհամակարգերի:
Հողերի դեգրադացիայի չեզոքությունը ենթադրում է հողային ռեսուրսների վիճակի բարելավում՝ նպատակաուղղված տնտեսական, սոցիալական և բնապահպանական օգուտների աճին: Ընդհանուր առմամբ հողերի դեգրադացիայի չեզոքության վիճակին հասնելու գործընթացը հենվում է երկրի զարգացման առաջնահերթությունների համակողմանի և հավասարաչափ կիրառման վրա:

Հայաստանում հողերի դեգրադացիայի չեզոքության հասնելը ազգային կամավոր գլոբալ նպատակ է, որը սահմանում է, որ մինչև 2040թ. պետք է հասնել հողերում օրգանական ածխածնի պաշարների ավելացման՝ 2015թ. վիճակի համեմատ 1.5%-ով:

Հողերի բարելավմանն ու դեգրադացիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումները և եղանակները շատ բազմազան են, ստորև ներկայացվում են դրանց հիմնական ուղղությունները.

- Հողամշակության խնայողական եղանակների կիրառություն.
Ինտենսիվ գյուղատնտեսությունը խախտում է հողի կառուցվածքը և նպաստում դրա դեգրադացիային, իսկ հողի նվազագույն կամ զրոյական մշակությունը ընդհակառակը՝ պահպանում է հողի կառուցվածքը, նպաստում հողում օրգանական նյութերի կուտակմանը, կանխում խոնավության կորուստը և բարձրացնում կլիմայի փոփոխության անբարենպաստ գործոնների նկատմամբ գյուղատնտեսության ոլորտի դիմակայունությունը:

- Ցանքաշրջանառության կիրառում. Միևնույն դաշտում տարբեր տեսակի մշակաբույսերի հերթագայությունը օգնում է վերացնել վնասատուներն ու հիվանդությունները, մեծացնել դրա բերրիությունը և նվազեցնել սննդանյութերի պակասի վտանգը:
- Հողերի շերտային օգտագործում. Կիրառվում է հողերի դեգրադացիայի դեմ պայքարելու համար, որի դեպքում